11030385

ցուցընեն իրեն ահաբեկեալ ընկերաց։ Վերջապէս արշաւանքն անյաջող կ'երթայ, և երբ ապրեալքն կորակոր կը դառնան 'ի նաւ, կը տեսնան որ մէջերնէն ամենքն ալ աւելի կամ նուազ խոցեալ էին կարեվէր։

Անգղիացիք երբոր այս կերպով պարտեցան, ապստամբութիւնն ու խռովութիւնն աւելի ևս տարածուեցաւ, և Էմինայի հարկատուք ևս դաշնաւորեցան Աշանդայ հետ. որով Անգղիացւոց վիճակն շատ աւելի վտանգեցաւ։

Այս ձախողանաց լուրն երբոր հասաւ յԱնգղիա, սաստիկ վախ մը դրաւեց ամենուն սիրտը։ Զեռք զարկին անդէն երկրորդ արշաւանաց պատրաստութեան, որ մեկնեցաւ տարւոյս սեպտեմբերի 12ին, ունելով հրաման գնալ 'ի վերայ Գումասսի։ Պատրաստութիւնքն մեծ ու ահաւորք եղան, բայց գործոյն յաջողութիւնը երկբայական։

Հրաման ունին մինչև մարտ ամիս ամենայն ինչ լմընցնել, բայց կը մնայ տեսնել թէ ինչ ապագայ պիտի ունենան։

ՎԻՍԳՈՆԴԻ–ՎԵՆՈՍԴԱ

Իտալական տէրութեան այժմեան արտաքին գործոց պաշտօնեայն, Վիսգոնդի–Վենոսդա, ծնած է յամին 1828։ Աւելորդ կը համարիմք խօսել մանրամասն իր ամբողջ կենացն ընթացիցը վրայ 'ի մանկութենէ մինչև յայս չափ հասակի. այս միայն ըսեմք որ իր յաջողամտութեամբն յուսմունս և յառաջադիմութեամբն՝ գեղեցիկ ապագայ մը կը խոստանար իր հայրենեացը. որուն պատմութեանը հմտանալով և տեղեկանալով անոր փառաց ու աղետիցը, վառեցաւ սաստկապէս 'ի սէր նորա, որ մեծ նշան է ազնուախոհ սրտի։ Ճոխացեալ էր 'ի բնութենէ ընտիր ձրիք և բարեմասնութեամբք. ազնուական սիրտ մ'ունէր, եռանդուն հոգի և բազմաբեղուն միտք, և կարծես փափաքանք ժամանակին կ'ըսպասէր որ օգտակար ընէ իր հայրենեաց այս բարի ու գեղեցիկ տուրքերը։

Ցնծութեամբ ողջունեց առաջին անգամ'ի Միլան զառաջին արշալոյս ազատութեան հայրենեաց, գործակցելով անոնց՝ որք յայնժամ իբրև կազմողք համարեալ էին Լոմպարտիոյ ազատական կուսակցութեան։ Հանճարոտն, բարուց քաղցրութեամբն ու սիրելութեամբն յինքն ձգեց քաւուր կոմսին համարումը ու բարեկամութիւնը, որ իր սիրելեաց ու գործակցաց մէջ դասեց զինքը. ու 'ի ցոյց և 'ի նշան իր վստահութեանը, կարիպալտի զօրավարին ղրկեց զնա իբրև արքայական գործակատար։

Վիսգոնդի–Վենոսդայի քաղաքագիտական յաջողամտութիւնն յայտնուեցաւ առաւելապէս յամին 1860, երբ Ռէբոլի մարգիզին հետ տարակարգ առաքելութեան պաշտօն մը կատարեց յարքունիս Բարիզու ու Լոնտրայի։

Երբ դարձաւ 'ի հայրենիս, ընդհանուր ընտրութեանց ժամանակ ըլլալով, երեսփոխան կարգեցաւ 'ի Խորհրդարանի։ Եւ ապա 'ի վարձ և 'ի փոխարէն իր հայրենեաց մատուցած ծառայութեանցը, կոչեցին զնա 'ի 'ի Պաշտօնարան արտաքին գործոց. և ժամանակ մը նոյն պաշտաման մէջ մնալէն ետքը իբրև քարտուղար, յամին 1863 մարտի 24ին արտաքին գործոց Պաշտօնեայ անուանեցաւ, և կատարեց զայն մինչև 1864 տարւոյն սեպտեմբեր ամիսը. յորում 'ի պատճառս պաշտօնական գժտութեան՝ հրաժարեցաւ պաշտօնէն Մինկէդդիին, Բէրուցցիին ու այլոց հետ։ Դարձեալ յամին 1866 յունիս ամսոյն մէջ կոչեցաւ պաշտօնեայ արտաքին գործոց. բայց այս անգամ ալ նոյնպէս կարճ տևեց, այսինքն մինչև յաջորդ տարւոյն ապրիլ ամիսը, յորում ժամանակի Պաշտօնարանն երկու նախագահ ունեցաւ, նախ զզօրապետն Լա Մարմորա և ապա զՌիքազոլի, երբ առաջինն մեկնեցաւ 'ի դաշտ պատերազմի։ Ռիքազոլիէն

11030385

եղբը անցաւ 'ի նախագահութիւն Ռադացցի, բայց 'ի պատճառս անմիաբանութեանց և սա չի տեսելով 'ի պաշտաման, փոխանակեց 'ի տեղի նորա Մենապրէա, և սոր տեղն ալ անցաւ Լանցա, որուն ատեն Վիսգոնդի–Վենոսդա նոպդա միւսանգամ արտաքին գործոց պաշտօնեայ անուանեցաւ։

Բաւական ժամանակ էր որ այս կերպով առանց խռովութեան կը յառաջէր պաշտօնարանն նախագահութեամբ Լանցայի. բայց տարուոյս յուլիս ամսոյն

Վիսգոնդի–Վենոսդա

մէջ, ուրիշ պաշտօնական գժտութիւն մը տապալեց և զԼանցա, և անցաւ 'ի տեղի նորա Մինկէդդի, մնալով Վիսգոնդի–Վենոսդա իր պաշտաման մէջ։

Երբ տարուոյս սեպտեմբեր ամսոյն մէջ Վիկտոր Էմմանուէլ Վեննայի ու Պեռլինի Ազգունեաց այցելութեան գընաց, հետը առաւ Մինկէդդիին հետ և զՎիսգոնդի–Վենոսդա իբրև կարևոր անձն, որ իր ազնուութեամբն ու հանճարովն, մեծապէս սիրելի եղաւ Վեննայի ու Պեռլինի մեծամեծաց։

Այս համառօտ տեղեկութիւնն բաւական է առ 'ի ցուցանել որ Վիսգոնդի–Վենոսդայի անունն պատմութեան մէջ իր ճոխ էջը պիտի գրաւէ։